Էլեկտրոնային Այցի Հաստատում(EVV)

IHSS Հեռախոսային ժամացուցակի Համակարգ(TTS)

Մատակարարի Գրանցում

Լրացուցիչ օգնության համար խնդրում ենք դիմեք IHSS-ի Ծառայության Բաժին՝ (866) 376-7066 հեռախոսահամարով, Երկուշաբթիից – Ուրբաթ, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 5-ը:

IHSS-ի Հեռախոսային Ժամացուցակի Համակարգի (TTS) ծառայությունում գրանցվելու համար, Դուք պետք է զանգահարեք (833) DIAL-EVV or (833) 342-5388 հեռախոսահամարով և կլսեք հետևյալ հաղորդագրությունը.

«Շնորհակալություն IHSS-ի Հեռախոսային ժամացուցակի համակարգ զանգահարելու համար: Խնդրում ենք ընտրել Ձեր նախընտրելի լեզուն հետևյալ տարբերակներից: Դուք կարող եք ցանկացած պահի կատարել Ձեր ընտրությունը»:

Յուրաքանչյուր հուշումից հետո, օգտագործեք Ձեր ստեղնաշարը տեղեկությունները մուտքագրելու համար:.

Անգլերենի համար սեղմեք 1:

Իսպաներենի համար սեղմեք 2:

Հայերենի համար սեղմեք 3:

Չինարենի համար սեղմեք 4:

Հաջորդը, TTS-ը Ձեզ կհուշի ընտրել՝ արդյոք Դուք մատակարար եք, թե ստացող:

TTS-ը կասի. **«Եթե Դուք ստացող եք, խնդրում ենք սեղմեք 1, եթե Դուք մատակարար եք սեղմեք 2 »:**

Քանի որ, Դուք մատակարար եք, ապա կսեղմեք ‘2’

Դուք կտեղափոխվեք Գլխավոր Մենյու/ցանկ:

TTS-ը կասի. **«Սա հիմնական մենյուն է: Խնդրում ենք ընտրել հետևյալ տարբերակներից: Դուք կարող եք ցանկացած պահի կատարել Ձեր ընտրությունը.**

Սեղմեք 1՝ մուտք գործելու համար

Սեղմեք 2՝ Ձեր գաղտնանիշը վերականգնելու համար

Սեղմեք 3՝ գրանցման համար»

Քանի որ Դուք ցանկանում եք գրանցվել TTS-ում սեղմեք 3

Հաջորդ քայլի համար Դուք պետք է պատրաստ ունենաք հետևյալ տեղեկությունները.

- Ձեր 6-նիշանոց Գրանցման թիվը/կոդը
  - Ձեր գրանցման կոդը նախկինում ուղարկվել է Ձեզ փոստով: Եթե չեք կարող գտնել այն, խնդրում ենք զանգահարել Ձեր տեղական վարչաշրջանի գրասենյակ:
- Ձեր մատակարարի համարը.
  - Ձեր մատակարարի համարը պետք է լինի 9-նիշանոց թիվ և կարող եք այն տեսնել Ձեր աշխատավարձի թերթիկի վրա:
- Ծննդյան Ամսաթիվը

Հաջորդը, TTS- ը Ձեզ կհուշի.

Շարունակելու համար, սեղմեք 1

Հիմնական մենյու/ցուցակ վերադառնալու համար, սեղմեք 9.

Եթե գրանցման կոդ չունեք, խնդրում ենք սեղմել զրո՝ օգնություն ստանալու համար:

Եթե դուք սեղմեք 0, ապա կփոխանցվեք IHSS-ի Աջակցության Բաժին:

TTS-ը կասի. **«Ձեր հեռախոսի ստեղնաշարի միջոցով խնդրում ենք հավաքել Ձեր 6-նիշանոց գրանցման կոդը, որից հետո՝ վանդականիշը: Ձեր գրանցման կոդն արդեն նախօրոք Ձեզ ուղարկվել է»:**

Հետո, TTS-ը կասի. «Մուտքագրեք Ձեր 9-նիշանոց մատակարարի համարը, որից հետո՝ վանդականիշը (#)»:

Ձեր մատակարարի համարը կարելի է գտնել Ձեր կողմից ստացված որևէ IHSS փաստաթղթում, կամ Ձեր աշխատավարձի թերթիկի վրա:

TTS-ը կասի. **«Խնդրում ենք մուտքագրել Ձեր ծննդյան ամսաթիվը, որից հետո՝ վանդականիշը: Ձեր ծննդյան ամսաթիվը պետք է մուտքագրվի որպես 2- նիշ՝ ամսվա համար, 2- նիշ՝ օրվա համար և 4- նիշ՝ տարվա համար: Օրինակ՝ եթե Դուք ծնվել եք 1976 թվականի Մայիսի 12-ին, ապա Դուք պետք է մուտքագրեք 05121976: Խնդրում ենք մուտքագրել Ձեր ծննդյան ամսաթիվը, որից հետո՝ վանդականիշը»:**

Օրինակ՝ Մայիս 01, 2019

Ամիս. Մայիս **Օրը. 01** **Տարի. 2019#**



Եթե Դուք մուտքագրել եք սխալ թվեր, ապա TTS-ը Ձեզ կտեղեկացնի, որ Ձեր մուտքագրումը չի ճանաչվել և պետք է ճիշտ մուտքագրում կատարեք:

Եթե Դուք նորից սխալ մուտքագրում կատարեք, TTS-ը կասի սեղմեք "0" օգնության համար: Դուք կտեղափոխվեք IHSS Ծառայության բաժին՝ օգնության համար:

Եթե մուտքագրեք ճիշտ թվեր, ապա կլսեք հետևյալ հաղորդագրությունը.

«Ձեր տեղեկությունները հաստատվել են: Այժմ Դուք պետք է ստեղծեք Ձեր գաղտնանիշը: Ձեր գաղտնանիշը կլինի 4-նիշանոց թիվ, որը Դուք կօգտագործեք ամեն անգամ IHSS-ի Հեռախոսային Ժամացուցակի Համակարգ մուտք գործելու համար: Օգտվելով Ձեր հեռախոսի ստեղնաշարից, մուտքագրեք 4-նիշանոց թիվ, որը Դուք ցանկանում եք օգտագործել որպես Ձեր գաղտնանիշ, որից հետո՝ վանդականիշը»:

Հիշեք, որ Ձեր գաղտնանիշը պետք է գաղտնի պահել և չտեղեկացնել ոերևէ մեկի:

Երբ ավարտեք գաղտնանիշն ընտրելու բաժինը, Դուք կլսեք հետևյալը՝

“Շնորհավորում ենք, Ձեր գրանցումն ավարտվել է, և Դուք գրանցված եք Տնային Աջակցության Ծառայությունների Հեռախոսային ժամացուցակի համակարգից օգտվելու համար: Ձեզ այժմ կտեղափոխեն Հիմնական Մենյու՝ մուտք գործելու համար կամ կարող եք դնել լսափողը՝այս հեռախոսազանգն ավարտելու համար»:

Այժմ Դուք կարող եք օգտագործել Ձեր գաղտնանիշը և TTS-ի միջոցով մուտքագրել Ձեր աշխատած ժամերը և ներկայացնել ժամացուակները ստացողին վերանայման, հաստատման կամ մերժման համար:

Հիշեք, որպես մատակարար, Դուք կարող եք նաև կատարել հետևյալը TTS-ում.

- Մուտքագրել Ձեր աշխատած ժամերը հեռախոսային ժամացուցակում:
- Վերանայել/ստուգել Ձեր հեռախոսային ժամացուցակը:
- Ներկայացնել Ձեր ժամացուակները ստացողին՝ վերանայելու, հաստատելու կամ մերժելու համար: